Grammaire **LES SUFFIXES DE VERBES**

On peut classer les suffixes de verbes en quatre groupes :

1. Les simples suffixes translatifs de verbes /սոսկածանցավոր բայեր/ qui permettent de former de nouveaux verbes : -ան-, -են-, -ն-, -չ-

   Exemples : մեծանալ , մոտենալ , վախենալ , տեսնել , սառչել

2. Les suffixes factitifs ou causatifs /պատճառական բայեր/ : -ացն-, -եցն-, -ցն-

   Exemples : խաղացնել, խմեցնել, հագցնել, վազեցնել

3. Les suffixes multiplicatifs /բազմապատկական բայեր/ : -ատ-, -ոտ-, -կոտ-, -տ-

   Exemples : թռչկոտել , կտրատել , պատռտել

4. Le suffixe du passif /կրավորական բայեր/ : -վ-

   Exemples : գրել - գրվել , կառուցել - կառուցվել

Texte **ՍՊԻՏԱԿ ՁԻՈՒ ԱՄԱՌԸ**

Հին, լավ օրերից մի օր, երբ ես ինը տարեկան էի և աշխարհը լի էր ամեն տեսակի հրաշալիքներով, իսկ կյանքը դեռևս հաճելի ու խորհրդավոր երազ էր, իմ հորեղբայր Մուրադը, որին խելառ էին համարում բոլորը, բացի ինձնից, առավոտյան ժամը չորսին եկավ մեր բակը: Բախելով սենյակիս լուսամուտը, նա արթնացրեց ինձ:

- Արամ, - ասաց նա:

Անկողնուց վեր թռա և լուսամուտից դուրս նայեցի: Չէի կարող տեսածիս հավատալ:

Արևն ուր որ է պետք է դուրս նայեր երկրի ծայրից:

Դեռևս առավոտ էր, բայց ամառ էր և բավական լույս կար, որպեսզի զգայի, թե երազի մեջ չեմ: Իմ հորեղբայր Մուրադը նստել էր մի գեղեցիկ, սպիտակ ձի:

Գլուխս լուսամուտից դուրս հանեցի և տրորեցի աչքերս:

- Այո, - ասաց նա հայերեն, - ձի է: Դու երազի մեջ չես: Շտապի՛ր, եթե ուզում ես ձի հեծնել:

Ես գիտեի, որ իմ հորեղբայր Մուրադը կարողանում է կյանքը վայելել ավելի լավ, քան ուրիշ որևէ մեկը, որ երբևէ սխալմամբ աշխարհ է եկել: Բայց այս մեկին չէի կարող հավատալ նույնիսկ ես:

Նախ իմ ամենավառ հիշողությունները կապված էին ձիերի հետ, և իմ տենչանքը ձի հեծնելն էր: Սա հրաշալի մասն էր:

Երկրորդ՝ մենք աղքատ էինք: Այս այն մասն էր, որ թույլ չէր տալիս ինձ հավատալ իմ տեսածին:

Exercices

I. Relevez tous les verbes du texte. Mettez-les à l'infinitif. Indiquez leur formation (simple ou avec suffixe), leur mode et temps.

II. Formez des verbes à partir des mots suivants :
   շատ , գեղեցիկ , քար , հեռու , քիչ , ուժեղ , փոքր , կանաչ , կարմիր

III. Ajoutez le suffixe du passif aux verbes suivants et formez des phrases :
   ջրել , հավաքել , սիրել , փորել , ծամել , կարդալ , նկարել

IV. Mettez les verbes à la forme factitive, formez des phrases :
   Հավատալ , վախենալ , քայլել , խոսել , լռել , ուրախանալ